

ԺՈՂՈՎՐԴԻՄԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ
ՅԵՎ
ԺՈՂՈՎՐԴԻՄԿԱՆ ԱՏԵՆԱԿՈՒՐ
ԳՐԱԴԱՐԱՆ

Վ. Մ. ԶԱԲԿՎՈՅԵ

ԽՈՒԼԵԳԱՆՈՒԹՅՈՒՆ

Ի. Տ. ԳՈԼՅԱԿՈՎԻ
ԽՄԲԱԳՐԱԿՐՅԱԿՐ

343

9-68

ՀԱՇԱՐԱՐՈՒՅՑ ՀԱՅԱԿԱՆ ԽՈՀ ՊՐԵՖԵԿՈՒՐԻ
ՅԵՎԵԼ ● 1940

01 MAR 2010

ԽՍՀՄ ԱՐԴՖՈՂԿՈՄԱՏԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՔՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ ՁԵՎ ՔՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Հ | Арм.
2-57332

343

Վ. Մ. Զ Խ Կ Վ Ա Զ Ե

Գ-68 ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ

Ի. Տ. ԳՈՂՅԱԿՈՎԻ
ԽՄԲԱԳԻՈՒԹՅԱՄՔ

Инв. № 15005

ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱՆ ԽՍՀ ԱՐԴՖՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ • 1940



17 JUL 2013

Վերջին ժամանակները գատական որդանները համալրվել են ժողովրդական գատավորների և ժողովրդական ատենակալների նոր կազմերով, վարոնք զեւևս բավարար չափով ծանոթ չեն խորհրդային որենագործության ու չունեն գատական աշխատանքի անհրաժեշտ փորձ։ Այդ ընկերներին ոգնություն և պետք, վարպետություն է պատրաստ արագ կերպով կարողանան տիրապետել զործին, ընդգրկեն գատական աշխատանքի հիմնական հարցերը, կողմնորոշվեն գատարանի առաջ դրված ինքիրներում։

«Ժողովրդական գատավորի և ժողովրդական ատենակալի գրադարան»-ի լույսընծայումը զգալի չափով կրացնի արդարադատության մարմինների իրավաբանական հանրամատչելի գրականության բացը և ելական ոժանդակություն ցույց կտա ժողովրդական գատավորին և ժողովրդական ատենակալին՝ նրանց զործնական աշխատանքում։

Գրադարանը բաղկացած է քրեական և քաղաքացիական իրավունքի, դատական իրավունքի առանձին հարցերին և ժողովրդական գատարանի աշխատանքների այլ առանձին հարցերին նվիրված մի շաբթ գրքերից։

Իրավաբանական հրատարակչությունը խնդրում է ընթերցողներին լույս ընծայվող գրադարանի վերաբերյալ իրենց կարծիքն ու դիտողություններն ուղարկել հրատարակչությանը։



40770-63

ԳԼՈՒԽ

ԽՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՏԱՐՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԽՆԴԻԲՆԵՐԸ

1. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈԽԱՏՈՒՐԱՆ

Համկ(բ)կ առանութերորդ համագումարն ի մի բերեց լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, խորհրդային ժողովրդի կողմից ձեռք բերված համաշխարհային-պատմական հաղթանակների արդյունքները։

ԽՍՀՄ-ում հաղթանակած սոցիալիզմը ժողովուրդներին բերեց սոցիալիստական կուլտուրայի մեծագույն ծաղկում, արտադրողական ուժերի բուռն զարգացում, մարդկության զարգացման պատմության մեջ չտեսնված նյութական բարեկեցություն, յերջանիկ, խնդալից ու բերկրալի կյանք։

Սոցիալիզմի յերկրում մարդը բոլոր կապիտալիներից ամենաարժեքավորն է։ Խորհրդային մարդու բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար սոցիալիզմը ստեղծել է բոլոր անհրաժեշտ պայմանները։

Սոցիալիստական հասարակության կառուցման համար մզկող պայքարը հանդիսանում է մարդու բարձրագույն գաղափարական հատկությունների դաստիարակման մեծագույն դպրոցը։ նա խորհրդային քաղաքացիների մեջ դաստիարակում է բնավորության կայունություն, զգոնություն և անվեհերություն՝ թշնամիների դեմ մզկող պայքարում, անսահման նվիրվածություն հայրենիքին և սոցիալիզմի գործին։

Սոցիալիզմի համաշխարհային-պատմական հաղթանակները մեր յերկրում ստեղծել են խորհրդային ժողովրդի՝

պատմության մեջ չտեսնված բարոյական-քաղաքական միասնություն:

Ստալինյան Սահմանադրությունը բարձրացրեց ԽՍՀՄ քաղաքացիների քաղաքական ակտիվությունը, նրանց կազմակերպչական ինքնազործունելյությունը և ենտուզիազմը: Նա ԽՍՀՄ քաղաքացուն բարձրացրեց քաղաքական, գաղափարական և բարոյական վիթխարի բարձրության վրա: Նա ԽՍՀՄ քաղաքացիներին դաստիարակում և խորհրդային որենքների պահպանության և անշեղ կատարման, հասարակական պարտքին ազնվորեն վերաբերվելու վորով, սոցիալիստական համակեցության կանոնները հարգելու վորով, ժողովրդի թշնամիների նկատմամբ ատելության և սոցիալիստական հայրենիքի նկատմամբ սիրո վորով:

Խորհրդային յերկրում հսկայական աշխատանք և կատարված կապիտալիզմի մնացուկները մարդկանց դիտակցությունից վոչնչացնելու ուղղությամբ, մանր-բուրժուական տարերքը և անարխիականությունը, սանձարձակությունն ու անկարգապահությունն արժատախիլ անելու ուղղությամբ: Սակայն այդ աշխատանքը դեռ ամենեին ավարտված չէ՝ «...բուրժուական հայցքների մնացուկները մարդկանց գլուխներում մնում են ու դեռևս մնալու յին, թեպետ կապիտալիզմն եկոնոմիկայի մեջ արդեն լիկվիդացիայի յի յինթարկված: Բնդսմին պետք և հաշվի առնել, քոր կապիտալիստական շրջապատումը, վորի դեմ վառողը չոր պետք և պահել, ջանում և այդ մնացուկներն աշխատացնել ու պաշտպանել» («Համկ(թ)կ պատմության համառոտ դասընթաց» էջ 307*):

ԽՍՀՄ թեսկոխել և իր զարգացման նոր շրջանը՝ սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը:

Սկսել և խորհրդային պետության զարգացման նոր ետապը, յերբ վնասական նշանակություն և ստանում աշխատավորների կոմունիստական դաստիարակության և մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկները հաղթահարելու գործը:

* Հայերեն թարգմանության էջ 432:

Համկ(թ)կ ԽVIII համագումարում արտասանած իր ներածական ճառի մեջ ընկեր Մոլոտովը նշեց՝

«Մեր ներքին խնդիրների տեսակետից ծանրության կենտրոնն այժմ փոխադրվում է դաստիարակչական հարցերի վրա, կոմունիստական դաստիարակության հարցերի վրա, կապիտալիզմի դեռ այնչափ կենսունակ մնացուկներն աշխատավորների դիտակցության միջից Արկադիայի յևթաքելու խնդիրների վրա»:

2. ԽՈՒԼԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՆՅ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՂԱԾ ԿԱՓԻՏԱԼԻԶՄԻ ՄՆԱՅՈՒԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅԱՀԱՅԱՀ ՄԵԿՆ Ե

Աշխատավորական մասսաների նյութական անապահովությունը, վաղմայ նկատմամբ յեղած անվատահությունը, զործազրկությունը, քաղցր, բնակարանային անտանելի պայմանները, անապաստանությունը, խավարը և տղիտությունը, անկուլտուրականությունը—այս բոլորն ամենաբարենպաստ պայմաններն եյին ստեղծում խույժանության լայն զարգացման համար—նախահեղափոխական շրջանում:

Թուս մեծ զրոյ Մաքսիմ Գորկին իր «Ակուրով ավանը» պատմվածքի մեջ, բացառիկ ուժով և իրեն հատուկ զեղարվեստական վարպետությամբ, նկարագրել և, թե ինչպիս ցարական թուսատանի բանկուրների ծանր նյութական պայմանները խորսակում եյին մարդու հոգեկանը, դարձնելով նրան խույժան:

«Բուրժուատովովը շատ եր շփացել իր համագուղացիների յերես տալուց, բայց ել ավելին եր պահանջում, և չըսովարվելով, սարսափելի և վայրի կամակորության եր դիմում՝ պատառուում եր իր վրայի հագուստը, արվարձանում շրջում եր կիսամերկ, թավարվում եր փոշու և ցելիք մեջ, կենդանի կատուներին և չներին ջրհորների մեջ եր նետում, տղամարդկանց ծեծում եր, կանանց վիրավորում, կտի յերգեր եր յերգում, սուլում չարագուշակ»:

Հահագործման անտանելի պայմաններից խեղված հոգեբանության տեր մարդու վոչ պակաս վառ տիպ և կերտել Գորկին իր «Յերկնագույն կյանք» պատմվածքի

մէջ. ամենայն վարպետությամբ թափանցելով խուլիդանության հոգեբանության մէջ, Գորկին ցուցադրել և խուլիդան Կալիստրատի տիպը, վորն իր մասին այսպես և պատմում «Յես, պատահում ե, նավթ եմ լցնում նամակների փոստարկղները, խոթում եմ այնտեղ վառվող լուցիի, նամակներն այրվում են, և վոչ վոք վոչինչ չի հասկանում. մինչեւ անգամ թերթերում դրեցին, թե ինչից են այրվում նամակները: Զերմ զղացմունքներից, զրեցե՛ք ստոնարյուն կերպով: Հիմարություն ե, իհարկե, յերիտասարդություն, գիշերները չես քնում, միշտ մտածում ես՝ ինչով աչքի ընկինս: Յես այժմ ել սիրում եմ չփոթեցնել մարդկանց: Զվարճալի յե, յերբ նրանք սայթաքում են քայլելիս»:

Հարստահարության, շահագործման և լոնության վրա, կապիտալիզմի գայլի որենքի՝ «մարդը մարդու համար դայլ ե»—հաղթանակի վրա հիմնված Ծուսատանի ցարական կարգերը, ամեն կերպ արգելակում եյին հասարակության և կուլտուրայի զարգացումը: Այդ «ժողովուրդների բանտ»-ում, վորտեղ ժողովուրդը յենթարկվում եր չլուած ծաղրանքի, աշխատավոր մարդը վոչինչ չդիտեր, բացի զրկանքներից և աղքատությունից:

Խուլիգանության առանձին դեպքերը ԽՍՀՄ-ում ներկա պայմաններում, վկայում են դեռևս մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների առկայության մասին: Նրանք արտահայտում են մանր բուրծուական տարերի մնացուկների ննշումը մեր բնակչության առավել հետամնաց մասի վրա:

Տվյալ ետապում ես անցյալի մնացորդները կապիտալիզմի մնացուկների ձևով գոյություն ունեն մարդկանց գիտակցության մեջ «վո՞չ միայն այն պատճառով, վոր մարդկանց գիտակցությունն իր զարգացմամբ հետ և մնում նրանց տնտեսական գրությունից, այլև այն պատճառով, վոր մինչեւ այժմ ել գոյություն ունի կապիտալիստական շրջապատռմը, վորն աշխատում ե աշխատացնելու պաշտպանել կապիտալիզմի մնացուկները ԽՍՀՄ-ի եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ»: (Ստալին,

Հաշվետու գեկուցում կուսակցության ԽՎԱ համագումարին: Սղագրական հաշվետվություն, 1934 թ., եջ 28):

Ժողովրդի թշնամիները փարձում եյին ոգտագործել մարդկանց գիտակցության մեջ յեղած կապիտալիստական ժեացուկները և, մասնավորապես, խուլիգանությունը, սոցիալիզմի գեմ իրենց կատաղի պայքարն ուժեղացնելու համար, նպատակ ունենալով դրանով կազմալուծել սոցիալիստական կարգապահությունը և հասարակական կարգը: Թշնամական տարրերն ոգտագործում են մեր հասարակության առանձին անդամների հետամնացությունը, գեռես մինչև վերջը չհաղթահարված մանր-բուրծուական անարխիանությունը և մանր-սեփականատիրական հոգեբանությունը, մերով նրանց դեպի խուլիգանության ուղին՝ սոցիալիստական շինարարությունը կազմալուծելու նպատակով:

Խուլիգանության գեմ մղվող պայքարը հատուկ նշանակություն և ստանում խորհրդային ժողովրդի նյութական և կուլտուր-քաղաքական մակարդակի հետաղա վերելքի լույսի տակ:

Խուլիգանության դեմ մղվող պայքարը, պայքար և բնդդեմ մանր-բուրծուական անարխիանության, հետամնացության և անկուտուրականության, վորոնք ժառագություն են կապիտալիստական անցյալի դարավոր շահագործման և հարստահարության:

Խուլիգանության գեմ մղվող պայքարը, պայքար և ընդդեմ անկարգապահության, մնթիության, սանձարձակության, ընդդեմ՝ մանր-բուրծուական տարերքի և անարխիականության արտահայտումների: Խուլիգանության գեմ մղվող պայքարը, պայքար և աշխատանքի և սեփականության նկատմամբ նոր վերաբերմունք ստեղծելու համար, սոցիստական համակեցության կանոնները հարգելու, մեկը մյուսի, կուկեսիկի նկատմամբ նոր հարաբերություններ ստեղծելու համար, նոր մարդու դաստիարակության համար:

3. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱ-
ԿՈՒԹՅՈՒՆՆԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ԽՈՒՂԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Այսպես ուրեմն, խուղիգանության դեմ մղվող հաջող պայքարի հարցն անքակտելիորեն կապված է նոր կարգապահություն գաստիարակելու հետ, կապիտալիստական մնացուկները հաղթահարելու հետ։

Լենինը, բազմիցս ընդգծելով նոր, սոցիալիստական կարգապահություն սովորեցնելու ամբողջ դժվարությունը, միաժամանակ նշում եր պրոլետարական գիտակցական կարգապահության հոկյայիկան նշանակությունը՝ սոցիալիստական շինարարության խնդիրների իրականացման տեսակետից։ «Պետության այս նոր կազմակերպությունը ծնունդ և առնում մեծապույն դժվարությամբ, վորովհետեւ հաղթահարել իր կազմալուծիչ, մանր-բուրժուական սանձարձակությունը—դա ամենից դժվարն է, զա միլիոն անդամ ավելի դժվար է, քան քոնացող կարմածառերերին կամ բոնացող կապիտալիստին ճնշելը, բայց և այդ միլիոն անդամ ավելի արդյունավետ և շահագործումից ազատ նոր կազմակերպություն ստեղծելու համար։ Յերբ պրոլետարական կազմակերպությունը կլուծի այդ խնդիրը, այն ժամանակ սոցիալիզմը վերջնականապես կհաղթանակի» (Լենին, Յերկեր, Հատոր XXIV, էջ 307)։

Լենինն ընդգծում էր, վոր նոր կարգապահության գաստիարակումը տեղի յե ունենում դաստիարգային սուր պայքարի պայմաններում։

Նոր մարդու դաստիարակությունը տեղի յե ունենում մանր-բուրժուական տարերքի մնացորդների, մարդկանց գիտակցության մեջ յեղած անցյալի մնացուկների դեմ մըղվող համար պայքարի պայմաններում։ աշխատանքի, հանրային սեփականության, հասարակության նկատմամբ հակառական վերաբերմունք ունենալու դեմ—խուղիգանության, փնթիւթյան և այլնի դեմ մղվող պայքարում։

4. ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԽՈՒՂԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՄՊՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒԻՄ

Լենինը և Ստալինը հաշվի առնելով խուղիգանության մեծ վտանգը, վոր ունի նա սոցիալիստական հասարակության կասուցման համար, պահանջում են անխնա պայքար նրա դեմ։ «Խորհրդային իշխանության հերթական խնդիրները» հոդվածում լենինը դրում եր՝ «Դիկտատուրան յերկաթե իշխանություն և հեղափոխականուրեն-համարձակ և արագ, անխնա ինչպես շահագործողներին, նույնպես և խուղիգաններին ճնշելու դորժում» (Լենին, Յերկեր, Հատոր XXII, էջ 459)։

Լենինը պահանջում էր «...կյանքի ու մահի պատերազմ... խարեւաններին, պորտաբույժներին և խուղիգաններին» (Լենին, Յերկեր, Հատոր XXII, էջ 164)։

Ընկեր Ստալինը Համեկ(բ)կ կե և կվէ 1933 թ. հունվարյան պլենումում նշեց, վոր «մեր ժամանակի հեղափոխական որինականությունն իր սուր ծայրով ուղղված է... հանրային տնտեսության մեջ գողերի և լնասարարների դեմ, խուղիգանների և հանրային սեփականության հափշտակիչների վեմ» (Ստալին, Լենինիզմի հարցերը, 10-րդ հրատարակություն, էջ 509)։

Նոր ֆարգապահություն գաստիարակելու համար, կապիտալիզմի մնացուկների դեմ մղվող պայքարն ամենից առաջ տարվում և համոզումի, աշխատավորների մեջ լայն քաղաքական-դաստիարակչական աշխատանքներ տանելու մեթոդով, բնակչության հետամնաց տարերի վրա հասարակական ներդրուծության մեթոդներով։

Բայց այս մեթոդները բավական չեն։ Նոր կարգապահության դաստիարակելու և մարդկանց վերափոխելու գործում եյական դեր ե խաղում նաև քրեական պատիճը, հարկադրանքը։ Լենինը նշում ե, վոր «... այս տարերքի (մանր-բուրժուական—վ. Զ.) դեմ չի կարելի պայքարել միայն պրոպագանդայով ու ադխտացիայով, միայն մըցակցության կազմակերպմամբ, միայն կազմակերպիչների ընարությամբ,—պայքարը պիտի մղել նաև հարկադրանքով» (Լենին, Յերկեր, Հատոր XXII, էջ 460)։

Դրա հետ միաժամանակ Լենինը հիշատակում է, վոր հարկադրանքը դրական արդյունքներ ե տալիս, յեթե նա կիրառվում ե համոզումի հիման վրա:

«Ինչ գնով ել ուզում ե լինի, մենք պետք ե նախ համոզենք, իսկ հետո հարկադրենք» (Լենին, Յերկեր, հատոր XXVI, էջ 235):

Լենինը, պատժի ամենախիստ միջոցների կիրառում պահանջելով խուլիքանների համար, միաժամանակ պատժի այնպիսի կազմակերպման անհրաժեշտություն եր նշում, վոր մաքսիմալ չափով ապահովեր նրանց ուղղելու և վերադաստիարակելու հնարավորությունը: Լենինն առանձնապես սրում եր պատժի դաստիարակչական նշանակության հարցը՝ խուլիքանության դեմ մղվող պայքարում: Պատժի արդյունավետություն, նրա ձեւերի բազմապիսիություն, նրա անխուսափելիությունը և հրաժարակայնությունը, հանցագործի և նրա կատարած հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանից յենելով պատժի անհատականացում—ահա ինչ եր պահանջում Լենինը խորհրդային դատարանից՝ խուլիքաններին վերադաստիարակելու համար, նրանց սոցիալիստական համակեցության պայմաններին սովորեցնելու համար:

Գ Լ Ո Ւ Խ Ա

ԽՈՐՀՈՒՅՑԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ

1. ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Միութենական հանրապետությունների քրեական որենսգրքերը պարունակում են խուլիքանության դեմ պայքար նախատեսող հողվածներ: Քրեական որենսգրքերի այդ հողվածները պրակտիկայում ճիշտ կերպով կիրառելու համար, անհրաժեշտ ե պարզել այն հատկանիշները, վորոնց հիման վրա որենքը բնորոշում ե խուլիքանությունը: Այսուհետեւ

անհրաժեշտ ե ճիշտ կերպով սահմանադեմ միմյանցից խուլիքանության դեպքերը և խուլիքանության հետ նմանություն ունեցող, բայց քրեական որենսգրքի այլ հողվածներով նախատեսված այլ հանցագործությունների վերաբերյալ դեպքերը:

ՈՒՖՈՒՀ Ք. Որ. 74 հողվածը խուլիքանությունը հետեւյալ կերպ ե բնորոշում՝ «Արիկայության, այսինքն՝ հասարակության նկատմամբ ցույց տրվող ակներեւ արհամարհանքի հետ զուգորդված անպատճառ արարքների համար, յեթե կատարված են առաջին անգամ...»:

ՈՒՖՈՒՀ Ք. Որ. 74 հողվածի 2-րդ մասում տակա և խուլիքանական զործողությունների առավել ծանր տեսակների պատճենիության բնորոշումը, այն ե, յերբ «հիշյալ գործողություններն արտահայտվել են վայրագության կամ աղմկարության ձևով կամ կրկնվել են կամ համառորեն չեն դադարել, չնայած հասարակական կարգը պահպանով մարմինների արած նախազգուշացման և կամ աչքի չեն ընկել բացառիկ անպատճառությամբ ու հանդիսարյամբ»:

2. ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ՈԲՅԵԿՏԸ

Վորպեսի պարզենք քրեական որենսգրքի հիմայլ հողվածի բովանդակությունը, անհրաժեշտ ե ամենից առաջ վորոշել՝ խուլիքանական զործողություն կատարելու համար պատժով սպառնալով, ի՞նչ ե պաշտպանում քրեական որենքը: Այլ կերպ ասած, անհրաժեշտ ե պարզել՝ ինչի՞նկան պատճենամբ ե հանցագործը վոտնձություն կատարում կամ ի՞նչն ե հանդիսանում իրությանության որյեկտը:

Խուլիքանության ժամանակ սամենից առաջ հանցագործության որյեկտ ե հանդիսանում ացիալիստական պետության մեջ հաստատված հասարակական կարգը: Խուլիքանությունը խախտում ե մեր յերկրում տիրապետող իրավակարգը և հասարակական անդորրությունը: Նա խախտում ե սոցիալիստական համակեցության սահմանաված կանոնները:

Ստալինյան Սահմանադրության 130-րդ հողվածում դրված ե՝

«ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացի սրբագրավոր և
պահպանել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միության Սահմանադրությունը, կատարել
որենքները, աշխատանքի կարգապահություն պահպանել,
ազնվորեն վերաբերվել դեպի հասարակական պարտքը, հար-
գել սոցիալիստական համակեցության կանոնները»:

Ստալինյան Սահմանադրությունը սահմանեց ԽՍՀՄ
քաղաքացիներին հայրենիքի և սոցիալիզմի գործի նվիրվա-
ծության վորով դաստիարակող, սոցիալիստական համակե-
ցության կանոնները:

Սոցիալիստական համակեցության կանոնների տակ
պետք է հասկանալ բանվոր դասակարգի կողմից սահման-
ված հասարակական կարգերը, աշխատավորների կյանքի
պայմաններից բղխող մարդկանց վարչադի նորմաները,
սոցիալիստական հասարակության մեջ սահմանված սովո-
րությունները:

Այդպիսով՝ խուլիգանության հասարակական վտանգա-
վարությունը կայանում է նրանում, վոր նա վատնձգություն
և Ստալինյան Սահմանադրության մեջ գրված սոցիալիստա-
կան համակեցության կանոնների դեմ:

Խուլիգանությունը վատնձգություն՝ և վոչ միայն սո-
ցիալիստական իրավակարգի հանդեպ, այլև ԽՍՀՄ քաղա-
քացիների անձնական շահերի հանդեպ։ Ստալինյան Սահմա-
նադրությունը սահմանում է Խորհրդային Միության քա-
ղաքացիների անձնական իրավունքների լայն զարգացումն
ապահովող հասարակական կարգ։ ԽՍՀՄ քաղաքացիների
այդ շահերի խախտումը միաժամանակ համարվում է նաև
վատնձգություն խորհրդային հասարակական կարգի նկատ-
մամբ։

Նկատի ունենալով, վոր խուլիգանությունն ամենից ա-
ռաջ վատնձգություն և սոցիալիստական իրավակարգի
նկատմամբ, միութենական հանրապետությունների քրեա-
կան որենսդրքերը խուլիգանության վերաբերյալ հողվածը
մտցրել են վարչակարգի դեմ ուղղված հանցագործություն-
ների գլխի մեջ (ՌԽՖՍՀ Քր. Որ. 74-ըդ Հոդվածը, Ռէկրաֆ-
տական ԽՍՀ Քր. Որ. 70 Հոդվածը, Բելոռուսական ԽՍՀ Քր.
Որ. 107 Հոդվածը, Աղբեջանական ԽՍՀ Քր. Որ.

103 Հոդվածը, Վրացական ԽՍՀ Քր. Որ. 75 Հոդվածը, Հայ-
կական ԽՍՀ Քր. Որ. 98 Հոդվածը, Աւգրեկական ԽՍՀ Քր.
Որ. 97 Հոդվածը, Տաղիկական ԽՍՀ Քր. Որ. 95 Հոդվածը,
Թուրքմենական ԽՍՀ Քր. Որ. 69 Հոդվածը)։

ԽՍՀՄ, միութենական և ավտոնոմ հանգաւություն-
ների գատարանակազմության մասին նոր որենքն ընդունեց,
վոր խորհրդային իրավակարգի դեմ ուղղված խուլիգանա-
կան գործողությունները, միաժամանակ վոտնձգություն են
նաև խորհրդային քաղաքացու անձնավորության շահերի
դեմ, այդ անձնավորության նորման զարգացման պայման-
ների դեմ։

3. ՀԱՆՅԱԳՈՐԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԽՈԽԵԿԳԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՀԻՆ

Ինչպես արդեն վերը նշվեց, ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 Հոդ-
վածը խուլիգանությունը բնորոշում է, վորպես հասարակու-
թյան նկատմամբ ցույց տրվող ակների արհամարհանքի
հետ գուգորդված անպատճառ արարքներ։ Խուլիգանու-
թյան նման բնորոշում տալիս են միութենական հանրապե-
տությունների քրեական որենսդրքերից շատերը։ Խուլիգա-
նության բնորչան մեջ վորոշ տարբերություն են պարու-
նակում Ռէկրաֆտական և Բելոռուսական ԽՍՀ քրեական
որենսդրքերը։ ՌԽՖՍՀ Քր. Որ. խուլիգանության բնո-
րոշումը լրացնում է հանրապետության նկատմամբ ցուցա-
րեալիող արհամարհանքի նշումով, ԲԽՄՀ Քր. Որ. անձնա-
վորության նկատմամբ ցուցաբերվող արհամարհանքի նշու-
մով։

Անպատճառությունը խուլիգանության հիմնական հատ-
կանիչն է։ Յերեմին անպատճառության հասկացողությունը
հանգեցնում են յերեխայական չարաճճիության։ Դա իհարկե
ծիշտ չե։ Վորպես մանկական չարաճճիություն հասկացվող
անպատճառության և վորպես քրեական-պատժելի գործո-
ղություն համարվող անպատճառության միջև եյական
տարբերություն կա։

Քրեական իրավունքի մեջ անպատճառ գործողություն-
ների տակ պետք է հասկանալ միայն «գլարձության», «զո-

չաղության», «պարծենկոտության» և այլնի համար կատարված այն գործողությունները, վորոնք բավական հեռու են գնում յերեխայական չարաճնիության սահմաններից և հասարակական լուսանկ են ներկայացնում: Սակայն վոչ բոլոր անդատկառ արարքներն են խուլիդանության հանցակազմ տալիս: Անպատճառ գործողությունները միայն այն ժամանակ են խուլիդանական-հանցագործություն համարվում, յերբ նրանք գուգորդված են հասարակության նկատմամբ ցույց տրվող ակտերի արհամարհների հետ: Հասարակության նկատմամբ արհամարհանք ցույց տալը, արհամարհանք և սահմանված սոցիալիստական իրավակարգի հանգեղ, սոցիալիստական համակեցության կանոնների և հիմքերի նկատմամբ:

Խուլիդանության բնորոշ հատկանիշն են նաև նրա հրապարակայնությունը: Անպատճառ գործողությունների մեջ սովորաբար միայն այն ժամանակ է հասարակության նըկատմամբ արհամարհանք յերեան դալիս, յերբ նրանք կատարվում են չրապարակայնորեն:

Անպատճառ գործողություններ արտահայտելու ձեն ու տեսակները կարող են միանդամայն բազմապիսի լինել: Անպատճառ գործողությունների այդ բոլոր ձերերի և տեսակների համար ընդհանուր է համարվում հասարակության նկատմամբ ցույց տրվող արհամարհանքը, հասարակական կարգի և քաղաքացիների անդորրության խախտումը, մեր յերեկի և աշխատավորական մասսաների կուլտուրական նվաճումների նկատմամբ ցույց տրվող արհամարհանքը: Սրանց են վերաբերում, որինակ, անցենալուր խառնիր ասելը, լուսանքներ թափելը, բնական պահանջների բացահայտ կատարումը, փողոցում քաղաքացիներին ձանձրացնելն ու նրանցից ձեռք չքաշելը, կինոներում, թարոններում և այլուր վայրագություններ սարքելը: Անվիճելի յե, վոր նման գործողությունները հասարակական կարգի կոպիտ խախտումներ են և արհամարհանք են սոցիալիստական համակեցության կանոնների նկատմամբ:

Յերբ խուլիդանությունը գուգորդված չե անձնավորության նկատմամբ գործադրվող բոնության հետ, կամ ԽՍՀՄ

քաղաքացիների դույքքային շահերի դեմ Թույլ աըբված վունձգությունների հետ, առա նա կասկածանքի կամ սխալի առիթ չի տալիս նրա վորակման ժամանակի: Գործը բարդանում է այն գեղքերում, յերբ խուլիդանությունը գուգորդվում է անձի նկատմամբ բոնություն գործադրելու կամ դույքի նկատմամբ վունձգություն կատարելու հետ: Այս դեպքերում, վորպիս կանոն, առկա կինի վոչ միայն խուլիդանության հանցակազմ, այլև քրեական որենսգրքի այլ հոդվածներով նախանեսված այլ հանցագործության հանցակազմ, քանի վոր անձի նկատմամբ բոնություն գործադրելը կամ դույքի նկատմամբ վունձգություն կատարելը, համարվում է հանցագործության ինքնուրույն տեսակ:

Այդ դեպքերում տեղի ունի այսպես կոչված հանցանեմերի համակցություն:

ՌԽՖՍՀ Գերազույն գատարանի պլենումը դեռ 1926 թ. պարզաբանել է, վոր ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հոդվածով յենթակա յեն վորակման միայն այն անպատճառ արարքները, վորոնք գուգորդված են հասարակության նկատմամբ ցույց տրվող արհամարհանքի հետ, բայց վորոնք ինքն ըստ ինքյան չեն պարունակում ՌԽՖՍՀ Քր. Որ. հատուկ մասի այլ հոդվածներով նախանեսված վորեւ հանցագործություն:

4. ՀԱՆՑԱԳՈՐԾԻ ՀԱՆՑԱՆՔԸ

Խուլիդանությունը յենթադրում է դիտավորյալ դորձունեյություն, ընդվորում դիտավորությունը կարող է միեալ ուղղակի լինել: Խուլիդանության ժամանակ դիտավորությունը կայանում է նրանում, վոր հանցավորը դիտակցում է հասարակության նկատմամբ ցույց տրվող ակընհայտ արհամարհանքի հետ գուգորդված անպատճառ արարքների կատարումն իր կողմից և ցանկանում է այդ գործողությունների կատարումը:

5. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԸ

Խուլիդանություն կատարելու մեջ հանցավոր կարող է ինեւ խուլիդանական գործողություններ կատարած ամեն

մի հանցարկետակ անձ։ 16 տարին ըլրացած անչափահաս-ները խուլիդանության համար քրեական պատասխանա-տվության յենթարկվել չեն կարող։ Անչափահասներին խու-լիդանության համար պատասխանատվության յենթարկելը, սկսած 12 տարեկան հասակից, ճիշտ համարվել չի կարող, քանի վոր 1935 թ. ապրիլի 7-ի որենքը, վոր անչափահաս-ների քրեական պատասխանատվություն և նախատեսում իրեն խոկ որենքի մեջ թված հանցագործությունների հա-մար, խուլիդանության համար ցուցմունքներ չի պարունա-կում իր մեջ։ Այդ որենքը ընդլայնված մեկնաբանության յենթակա չե։ Խոկ յեթե անչափահասի գործողությունների մեջ 12—16 տարեկան հասակում, անձնափորության նկատ-մամբ թույլ տված վորեւե վոտնածզության նշաններ կան, ապա նաև համապատասխանորեն պատասխանատու յև մար-մական վնասվածք պատճառելու համար։ Անչափահասների գործողությունների մեջ խուլիդանության նշանները լինելու դեպքում պատասխանատվության են յենթարկվում անչա-փահասների ծնողները։ ԽՍՀՄ ԺԿԸ-ի և ՀամԿ(թ)Կ ԿԿ-ի 1935 թ. մայիսի 31-ի վորոշումը պարուալորեցնում և «... Բանվորա-պյուղացիական միլիցիայի դլխավոր վարչու-թյան՝ ուժեղացնել պայքարը յերեխանների և պատանիների կողմից վողոցներում կատարվող խուլիդանության դեմ (ծեծ, անցորդներին վիրավորանք հասցնել, տրամվայի բուֆերների վրա յերթեկել և այլն)։ Միլիցիայի որգան-ներին իրավունք և վերապահված «... տուղանել ծնողներին վարչական կարգով, մինչև 200 ոռորդու սահմաններում, յերեխանների անողատկառության և վողոյային խուլիդանու-թյան համար»։

6. ՀԱՍՏԱՐԱԿ ԽՈՒԼԻԴԱՆՈՒԹՅՈՒՆ

Քրեական որենսդիրքը խուլիդանության յերկու տե-սակ և նախատեսում՝ հասարակ և ծանր։ Հասարակ խուլի-դանություն՝ (ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 Հոդ. 1 մաս) յերբ խու-լիդանությունն առաջին անգամ և կատարվում և առանց վորեւե ծանրացնող հանգամանեների։

Հասարակ խուլիդանության նույնպիսի հասկացողու-

թյուն են տալիս նաև միութենական հանրապետություննե-րի այլ քրեական որենսդրքեր, բացառությամբ Ուկրաինա-կան և Ռուսական հանրապետությունների Քր. Որենսդրք-քերից, վորոնք ընդհանուր առմամբ խուլիդանության հա-սարակ տեսակ չեն նախատեսում։

Միութենական հանրապետությունների քրեական որենս-դրքերն եյական տարբերություն են պարունակում իրենց մեջ՝ հասարակ խուլիդանության համար պատիժ վորոշելու հարցում։

ՌԽՖՍՀ Քր. Որ. Հասարակ խուլիդանության համար պատիժ և նախատեսում՝ հարկադիր աշխատանք մինչև 3 ամիս ժամանակով, յեթե մինչև քրեական հետազնդում հարուցելը, հիշյալ գործողությունները կատարող անձնա-վորության նկատմամբ վարչական տուժի միջաներ չեն դրվել։

Բելուսուսական և Վրացական հանրապետությունների Քրեական Որենսդրքերի համաձայն հասարակ խուլիդանու-թյունը հետազնդվում և միայն քրեական կարգով։ Բայ- ԲԽՖՍՀ Քր. Որ., հասարակ խուլիդանության համար պատիժ և նշանակվում հարկադիր աշխատանք մինչև 6 ամիս ժամանակով, ըստ Վրացական ԽՍՀ Քր. Որենսդրքի հարկա-դիր աշխատանքներ մինչև 1 տարի ժամանակով, կամ տու-զանք մինչև 300 ռուբլի։

Բայ Տաջիկական ԽՍՀ Քր. Որ., հասարակ խուլիդանու-թյան համար նախատեսվում և հարկադիր աշխատանք մինչև 3 ամիս։

Բայ Հայկական ԽՍՀ Քր. Որենսդրքի՝ հարկադիր աշ-խատանք մինչև 3 ամիս ժամանակով կամ տուզանք մինչև 500 ռուբլի։

Բայ Թուրքիական ԽՍՀ Քր. Որենսդրքի՝ հարկադիր աշխատանք մինչև 3 ամիս ժամանակով կամ տուզանք մինչև 300 ռուբլի։

Աղբյուր Հանական ԽՍՀ Քր. Որենսդրքն առավել խիստ պատժամիջոց և նախատեսում՝ հասարակ խուլիդանության համար—այն և հարկադիր աշխատանք մինչև 1 տարի ժամանակով կամ տուզանք մինչև 1000 ռուբլի։



ԹեֆՄՀՀ Քր. Որ. 74 հոդ. 2-րդ մասը խուկիգանության ժամբ տեսակ է համարում այն անպատկառ գործողությունները, վլորոնք արտահայտվել են վայրագության կամ աղմբկարարության ձևով, կամ կրկնվել են, կամ համառոքն չեն դադարել, չնայած հասարակական կարգը պահպանող մարմինների արած նախազգուշացման և կամ աչքի յեն ընկել բացառիկ անպատկառությամբ կամ հանդգինությամբ:

Հանցագործությունը խուլիզանության ծանր տեսակ համարելու համար, բավական և որենքում նշված հաստիւնիչներց թեկուզ և մեկի առկայությունը, բայց նու պեսք և լինի պարտադիր կերպով:

«Կրկնվել են» բառերի տակ պետք է հասկանալ խուլիզանական նոր գործողությունների կատարում, այն բանից հետո, յերբ նու մեկ անգամ արդեն կատարված և յեղել վաղուց:

«Վայրագություն»-ը և «աղմկարարություն»-ը բավական բայն և անորոշ համկացողություններ են: Պարզ է, վորոշիքամատական իրավակարգի խախտման մի շարք դեպքեր, վորոնք հասարակ խուլիզանություն են համարվում, համեմայն դեպք այս կամ այն չափով իրենց մեջ պարունակում են վայրագության կամ աղմկարարության տարրեր:

Այս պատճառով եւ, վորոշու խուլիզանություն վորակող հանդամանքներ, վայրագության և աղմկարարության տակ պետք է նկատի ունենալ հասարակական կարգի խախտման տառապել նշանակալից փաստերը: Աղմկարարության կամ վայրագության ամեն մի կոնկրետ դեպքի նկատմամբ քրեական որենսդրի առաջին կամ յերկրորդ մասերը կիրառելու հարցը, ամեն մի կոնկրետ դեպքում վարույթում և դատարանի կողմից, զործի բոլոր հանդամանքներն ուսումնասիրելու հիման վրա:

Եռյնը պետք է ասել նաև «հանդգնության» կամ «ցինիզմի» վերաբերմամբ, վորոնք նույնպես վորոշվում են դատարանի կողմից զործի կոնկրետ հանդամանքներն ուսումնասիրելու հիման վրա:

Վրացական, Աղմկարական, Թուրքմենական, Տաղիկական և Հայկական ԽՍՀ քրեական որենազգություն ամբողջութիւն վերընդունել են ՌԽՄՍՀ Քր. Որ. 74 հոդ. 2-րդ մասի մեջ արված խուլիզանության ծանր տեսակի հասկացողությունը, բայց առությամբ Տաղիկական ԽՍՀ Քր. Որենագրքեց, վորը ծանր խուլիզանության հասկացողությունը լրացնում և խուլիզանական գործողությունների չարամիտ բնույթի ցուցումով:

Ուկրաինական, Բևրուսուսական և Ուզբեկական ԽՍՀ Քր. Որենագրքերը ծանր խուլիզանության շարքին են զանում նաև փոքրահասակների նկատմամբ և մի խումբ պնձանց կողմից (ՌԽԽՍՀ և ԲԽՍՀ Քր. Որ.), կամ կանանց նկատմամբ (ՌԽԽՍՀ և ՈՒՂԽՍՀ Քր. Որ.) թույլ տված խուլիզանական գործողությունները:

Վորակալ խուլիզանության համար պատիժ և նախատիւնական աղմատադրկում մինչև 5 տարի ժամանակում:

8. ԽՈՒԿԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՈւկԽՍՀ և ԲԽՍՀ քրեական որենազգություն նախատեսում են նաև խուլիզանության այլ տեսակներ:

ՈւկԽՍՀ Քր. Որենքը, բայց ծանր խուլիզանության վերը նշված տեսակներից, նախատեսում և խուլիզանություն՝ զուգորդված սպանության, բռնաբարության և մարմնական ծանր վնասվածքների հետ: ՈւկԽՍՀ Քր. Որ. խոսամ և հիշված գործողությունների կամ Հրկիվրան հետ զուգորդված խուլիզանության մասին: Այդ յերկու համերապետությունների Քրեական Որենագրքերը ծանր խուլիզանության առանձին տեսակների համար պատիժ են նախատեսում՝ ազատազրկում մինչև 10 տարի ժամանակով:

ՈւկԽՍՀ և ՈւկԽՍՀ քր. որենազգություն սպանության, բռնաբարության, մարմնական վնասվածքների և Հրկիվրան ների հետ զուգորդված ծանր խուլիզանության առանձին տեսակների առանձնացումը ճիշտ համարել չի կարելի, քանի վորդ դա հանդեցնում է խուլիզանության հասկացողության անչափ լայնացման, ի հաշվի հիշված հանցագործությունները նախատեսող Քր. Որ. համապատասխան հողվածների:

Այդպիսի գործերը պետք եւ վորակվեն վորակես բանդի-
տիզմ, քանի վոր նրանք խուլիզանության շրջանակներից
բավական հեռու են զնում և ներաճում են առավել վտան-
գավոր հանցագործությունների մեջ:

ԳԼՈՒԽ

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

1. ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄՅՈՒՄ ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄԸ

Մեր խորհրդային գատարանն ամենավճռական սկայքար
և տառում խուլիզանության դեմ: Խուլիզանության վերա-
բերյալ զործերով դատական պրակտիկան ճիշտ կերպով և
տարբերում խուլիզանության հասարակ և ծանր տեսակնե-
րը, սահմանագծում խուլիզանությունը և մյուս միանման
հանցագործությունները և խուլիզանների պատիժը վորո-
շում և կատարված հանցագործության ծանրությունը, հան-
ցանքի ասուհաննին և հանցագործի հասարակական վտան-
գավորությանը համապատասխանողեն:

Սակայն մինչև այժմ խուլիզանության վերաբերյալ գոր-
ծերով դատական պրակտիկան հանցագործությունների ճիշտ
վորակման և պատիժների վորոշման հարցում մի շարք
դեպքերում դեռ ևս վորոշ սխալներ ունի:

Խուլիզանությունը սերտ կերպով առնչվում է մի շարք
այլ հանցագործությունների հետ և ամենից համար անձի
դեմ ուղղված հանցագործությունների հետ, այն եւ մարմ-
նական վնասվածքների, ծեծի, հարվածելու, վիրապու-
րանքների և այլնի հետ:

Դատավորները պետք եւ հիշեն, վոր մարմնական վնաս-
գածքներ հացնելը, ծեծը, հարվածելը, վիրապուրանքները
և այլն, վորոնք կատարվել են վորոշ դիտավորությամբ
(շահախնդրություն, վրեժ, քին և այլն) պետք եւ վորակ-

վեն վոչ թե վորակես խուլիզանություն, այլ Քր. Որ. մյուս
համապատասխան հոգվածներով: Սակայն այդ գործողու-
թյուններն առանձին դեպքերում կարող են վորակվել նաև
Քր. Որ. 74 հոգվածով, յեթե նրանք կատարվել են խուլի-
զանական գրդումներով:

Դատական պրակտիկան ցույց եւ տալիս, վոր անձի կամ
դույքի դեմ ուղղված հանցագործությունները, վորոնք կա-
տարվել են հարրած վիճակում, բնավ ել խուլիզանություն
չհանդիսանալով, հաճախ վորակվում են Քր. Որ. 74 հոգ-
վածով: Դատարանի այդպիսի պրակտիկան սխալ է:

Անհրաժեշտ են նշել, վոր յերբեմն խուլիզանության ձե-
գով կատարվում են հակածեղափոխական հանցագործու-
թյուններ, որինակ, հարվածայիններին, հասարակական աշ-
խատողներին և ակտիվիստներին, նրանց քաղաքական կամ
արտադրական ակտիվության հողի վրա, ծեծի յենթարկե-
լը, խուլիզանների խմբի կողմից ժողովները և հասարակա-
կան ձեռնարկումները վիճեցնելը և այլն:

ԱԽՖՍՀ Գերազույն դատարանը 1935 թ. գետրվարի
14-ի իր վորոշմամբ պարզաբանել է, վոր՝ «Բույլ չտալ
ԲԽՖՍՀ Քր. Որ. 74 հոգվածով վորակելու խուլիզանների
խմբերի կողմից կատարված այլպիսի հանցագործու-
թյունները, կամ այն հանցագործությունները, վորոնք
կապված են հարվածայիններին, հասարակական աշխատող-
ներին և ակտիվիստներին՝ նրանց հասարակական կամ ար-
տադրության ակտիվության կապակցությամբ, ծեծի յեն-
թարկելու հետ, և այդ հանցագործությունները վորակել
Քր. Որ. համապատասխան այլ հոգվածներով»:

Եերեմն խուլիզանությունը վերածվում է բանդիտիզ-
մի: Դատական պրակտիկային հայտնի յեն խուլիզանական
խմբերի կողմից՝ խուլիզանության շարժառիթներով կա-
տարված բանդիտական բնույթի բացահայտ հարձակում-
ների դեպքեր, յերբ զենք են զործադրել և, մինչև անդամ,
հարեկել են աշխատավոր բնակչությանը:

Խուլիզանական շարժառիթներով կատարված այլպիսի
բանդիտական հարձակման որինակ կարող եւ ծառայել
Մուկվայի քաղաքային դատարանի կողմից քննված՝ ԽՍՀՄ

Գերագույն Խորհրդի դեպուտատ ընկեր Գուրզովի մըսք կատարված հարձակման վերաբերյալ գործը¹:

Դեռևս յեղակի չեն այնպիսի դեպքեր, յերբ դատավորները վորապես խուլիդանություն են վորակում անձի կամ դույքի նկատմամբ թույլ տրված վոտնձությունները, վորոնք պայմանավորված են լինում վորոշ շահախնդրական կամ այլ անձնական մոտիվներով, փոխանակ այդ դեպքերի նկատմամբ որենքի համապատասխան այլ հոդվածները կերպուիրու: Այս դրությունը հանգում է Քր. Որ. 74 հոդվածի կիրառման անչափ ընդլայնման, ի հաշիվ անձի կամ դույքի դեմ ուղղված հանցագործությունները նախառեսող հոդվածների:

Խուլիդանության հոդվածով սխալ վորակելու իլյուստրացիա կարող են ծառայել այլ հանցագործությունների հատկանիշներ պարունակող դորձողությունների հետեւալ որբնակները.

Դնեպրոպետրովսկի ավագանի ջրային-տրանսպորտային գատարանը 1938 թ. սեպտեմբերի 7-ին ՌԽՖՍՀ Քր. Որ. 70 հոդ. 1 մասով 3-ական տարրա ազատազրկման և դատապարտել առաջներում չղատուած դարբնին և առաջներում չղատված զեկակալին: Դատարանը պարզել է, վոր 1938 թ. հուլիսի 19-ին կ-ն հարբած վիճակում ներս և խուժում ջրայինների հանրակացարանի սենյակներից մեկը, վորոնդ կանայք եյին բնակվում, անկարգություններ և անում, ծեծում բանվորուհի Զ-ին, նստարանով հարված հասցնում Բ-ի գլխին, վորը ցանկացել եր պաշտպանել Զ-ին, արտահայտվել ե անցենզուր բառերով, վիրավորելով մյուս կանանց:

Հանրակացարանի մոտից անցնելիս են լինում նավահանգստի կուսկազմակերպիչը և ակումբի վարիչը. լսելով ազմուկը և հայհոյանքը, նրանք մոտենում են Կ-ին և համոզում վերջ տալ. խուլիդանությանը: Ի պատասխան դրան կ-ն հարվածում է կուսկազմակերպիչ գլխին:

Մ-ն, լինելով հարբած վիճակում, իմանալով, վոր Կ-ն

¹ Այդ գործի բովանդակությունը բերված է «Պրավա»-ի 1938 թ. մայիսի 12 և 14-ի համարներում:

ծեծել ե նրա կնոջը՝ Բ-ին, զալիս է հանրակացարան և կովկառոնվում Կ-ի հետ, հարվածելով վերքեր պատճառում վերջինիս՝ դիմից և ուսերից:

Դատարանը, մեղադրյալ Կ-ի դորձողությունները ՌԽՖՍՀ Քր. Որ. 70 հոդ. 1 մասով ճիշտ վորակելով, մեղադրյալ Ս-ի դորձողությունների մեջ սխալ և խուլիդանության հանցակաղմ սահմանել: Մեղադրյալ Ս-ի դորձողությունները չեն կարելի խուլիդանություն համարել, քանի վոր նրա դորձողություններին զեկավարողը վորոշ նարարակ է յեղել՝ վրեժը, նրա կնոջը հասցված վիրավորանքի համար, իսկ նրա կատարած հանցագործությունը համարվում է մարմնական վնասվածք:

Լենինգրադ քաղաքի Զերժինսկու ուսունի ժողովրդական գատարանը 1937 թ. սեպտեմբերի 25-ին, առաջներում չպատված բանվոր Մ-ին ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հոդ. 2-րդ մասով, դատապարտեց յերկու տարվա ազատազրկման: Նախաքննության և դատաքննության նյութերով պարզված է հետեւյալը՝ 1937 թ. սեպտեմբերի 16-ին Մ-ն վերադառնալով աշխատանքից, մտնում է բուֆետ և ողի խմում: Բուֆետից դուրս դարով Մ-ն հանդիպում է գարեջրատան մոտ կանգնած յերեք քաղաքացիների, վորոնք սկսում են հետամուտ լինել նրան: Նրանցից մեկը՝ ն-ն հարվածում է Մ-ին, պատուելով նրա շրթունքը: Մ-ն հասնում է նրա հետեւյալ սկսում ծեծել նրան: Դատարանը քաղ. Մ-ի դորձողությունները ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հոդ. 2-րդ մասով սխալ է վորակել, քանի վոր նա հասարակության նկատմամբ ցույց տրվող ակներեւ արհամարհանքի հետ զուգորդված անպատկառ արարքներ չեն կատարել: Մ-ի դորձողությունների մեջ կա դիտավորյալ կերպով տուղջությունը չքայլայող մարմնական թեթև վնասակացարանը հանցակաղմ (նախառեսված ՌԽՖՍՀ Քր. Որ. 143 հոդ. 2-րդ մասով):

Խուլիդանության հետ ընդհանուր վոզինչ չունեցող հանցագործության ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հոդվածով վորակելու որինակ կարող է ծառայել կաչկովսկի (Ալտայի յերկրաբան) ժողովրդական դատարանի կողմից ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հ. 2-րդ մասով յերկու տարվա ազատազրկման դատա-

ոլարտված, առաջներում չղատված, չոփեր, մեղառյալ
թիւ գործը:

Թիւ հանցանքն աշտահայտվել է նրանում, վոր նա հար-
րած վիճակում նստելով ապրանքատար մեքենայի զեկի մոտ
և ժամը 60 կիլոմետրի արագություն զարգացնելով, չի կա-
րողացել մեքենան կատավարել և ներս և խոժել Զագոսզեր-
նոյի գրասենյակի շենքի մեջ, վասարով մեքենան։ Մեղա-
ղոյալի գործողությունը վոչ մի դեպքում չի կարելի հասա-
րակության նկատմամբ ցույց արվող ակներեւ արհամարհան-
քի հետ գուղորդված անպատկառ արարք համարել և նրա
փորակումը դատարանի կողմից Քր. Որ. 74 հ. 2-րդ մ.
փորսպես խուլիզանություն—սխալ ե։

Ինչպես վերը նշվեց, խուլիզանության հիմնական հատ-
կանից նրա հրապարակայնությունն ե։ Անպատկառ դործո-
ղությունները միայն այն ժամանակ են խուլիզանության
հանցակազմ տալիս, յերբ նրանց միջոցով արհամարհանք և
ի հայտ ըերվում հասարակության նկատմամբ և յերբ նրանք
քիչ թե շատ հրապարակայնորեն են կատարվում։ Այսուղից
հետեւում ե, վոր հրապարակայնորեն չկատարված ան-
պատկառ դործողությունները խուլիզանության հանցա-
կազմ տալ չեն կարող։ Այսպես, որինակ, վեճերը, վերա-
վորանքները, անցենզուրը յերգեր յերգելը, անցենզուր խոս-
քեր ասելը և այլն, վորոնք տեղի են ունեցել վոչ թե հասա-
րակական վայրերում, այլ ժամանակոր բնակարաններում,
ընտանիքի մեջ (յեթե այդ գործողությունները չեն խանդա-
րում հարեանների հանդիսաբ) չեն կարող վորակվել վոր-
սպես խուլիզանություն, այլ պետք ե դիմով։ Քր. Որ. հա-
մապատասխան հողմանների համաձայն։

Ճիշտ նույն կերպ ել չեն կարող վորսպես խուլիզանու-
թյուն վորակվել այն թյուրիմացությունները և կոնֆլիկտ-
ները, վորոնք ծագում են առանձին աշխատավորների միջև
կենցաղյին փոխհարաբերությունների հողի վրա։

Այսպես, որինակ, Մոսկվա քաղաքի Կոմինտերնյան ռա-
յոնի ժողովրդական դատարանը 1937 թ. հունիսի 10-ին բո-
լորովին սխալ կերպով թիւն, 34 տարեկան, ծառայող,
առաջներում չղատված—ՌԽՍՖՀ Քր. Որ. 74 հոդ. 2-րդ մա-
սով գատապարտեց 2 տարվա աղատազրկման։

Բ-ն հարբած վիճակում ներկայանում է իր ազդականնե-
րե բնակարանը և հանդիպելով այնտեղ իր կնոջը, վորի հետ
նա վորոշ ժամանակ միասին չեր ապրել, դանակով վերը
և հասցնում նրան։

Գործի նյութերից յերեսում ե, վոր մարդու և կնոջ
միջև մինչ այդ ինչ վոր գժտություն է յեղել և կնոջ վիրա-
փորումը տեղի յե ունեցել գժտության հողի վրա առաջա-
ցած անառողջ հարաբերությունների հետեանքով։

Այդ ամենը տեղի յե ունեցել վոչ հասարակական վայ-
րում, այլ մասնավոր բնակարանում, անդամ առանձին սեն-
յակում։ Այնուամենայնիվ դատարանը թիւ գործողություն-
ները վորակել և վորակես անպատկառություն հասարակա-
կան վայրում և դատապարտել և նրան չարամիտ խուլիզա-
նության համար, այն դեպքում, յերբ ճիշտ կլիներ, յեթե
թիւ գործողությունները վորակվեր Քր. Որ. 143 հոդ. I մա-
սով։

Կիրդիզական ԽՍՀ Սովետսկոյե շրջանի ժողովրդական
դատարանը 1938 թ. ապրիլի 20-ին ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հոդ.
2-րդ մասով, թիւն դատապարտում և 3 տարվա աղատա-
զրկման։ Նախնական դատական քննության նյութերով
պարզված ե, վոր թիւն սխատեմատիկորեն ծեծելիս և յեղել
իր կնոջը։ Մեղադրյալը դատարանում չի ժխտել իր մեղա-
փորությունը։ ԽՍՀ Միության Գերազույն Դադարանի դա-
տական կոլեգիան բոլորովին ճիշտ եր վարգել՝ վերափորա-
կելով թիւ հանցանքը ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հոդ. 2-րդ մա-
սով՝ 146 հոդմածի 2-րդ մասով, թողնելով դատարանի կող-
մից նշանակված պատճամիջոցը։

2. ՀԱՍՏՐԱԿԱ ՅԵՎ ԾԱՆՐ ՏԵՍԱԿԻ ԽՈՒԼԻԳԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՍՀՄՍՆԱԳԾՈՒՄԸ

Դատարանները հաճախ մոռանում են հասարակ և ծանր
տեսակի խուլիզանությունների միջև յեղած եյական ապր-
քերության մասին։ Հաճախ առաջին անդամ կատարված
անշան զանցանքները, վորոնք առանձին «վայրազությամբ»
կամ «աղմկարաբությամբ», «բացառիկ անպատճառու-
թյամբ և հանդությամբ» չեն գուղորդվել, դատապարտե-

ըը վորակում են վորպես չարամիտ խուլիդանություն, կիրառելով ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հոդ. 2-րդ մասով նախատեսված մաքսիմալ սանկցիան:

Հաճախակի յեն ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հոդ. 2-րդ մասով այն անձանց դատապարտությունները, վորոնց գործողությունների մեջ բոլորովին հանցակազմ չկամ երանց գործողություններն այնքան աննշան են, վոր կարող են քննության նյութ դառնալ ընկերական դատարաններում, ժողովներում, մամուլում և այլն:

Այսպես, որինակ, Կալմիկական ԻԽՍՀ կենտրոնական Ռելուչի ժողովրդական դատարանը 1937 թ. նոյեմբերի 17-ին Յե-ին-53 տարեկան, կողմանտեսական, առաջներում չգատված—ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հոդ. 2-րդ մասով դատապարտում ե ազատազրկման $2\frac{1}{2}$ տարի ժամանակով: Յե-ն հարբած վիճակում ներկայանում ե կոլտնտվարչություն և վիրավորանք հասցնում կողմանտեսության այնտեղ գտնվող աշխատակիցներին և կողմանտեսության նախագահին: Հենց դրանց իսկ առաջ Յե-ն նրանցից ներողություն ե խընդրում: Բոլորովին պարզ ե, վոր Յե-ի գործողությունների մեջ քրեական-պատժելի հանցակազմ չկամ ե նրանք կարող ելին քննության առարկա դառնալ կողմանտեսականների ժողովում կամ ընկերական դատարանում:

Մանր գեղքերի վերաբերյալ գործերը, յերբ խուլիդանական գործողություններ թույլ տվողն առաջին անգամն ե կատարում այն և պատահմամբ, արտադրության առաջալոր ե, նպատակահարմար ե հանձնել արտօտդրական-ընկերական դատարանների քննության, վորոնք անվիճելիորեն մեծ դեր են խաղում խուլիդանության դեմ պայքարելու գործում: Առանձին գեղքերում աննշան խուլիդանական դանցանքները ընալ դատարական քննության կարգ չեն պահանջում, այդպիսի գեղքերում բավական կլինի հասարակական ներգործությունը, մամուլը ոգտադորելու միջոցով, ժողովներում քննության առնելու, կոմյերիստմիության, արհմիության գծով ներգործելու և այլ միջոցներով վորոշ հասարակական կարծիք ստեղծելը և այլն:

3. ՀԱՆՑԱԳՈՐԾԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԻԺԼ ՎՈՐՈՇԵԼԻՄ

Խուլիդանական գործողությունների սխալ վորակման հետ միասին, դատապարտական պլրակտիկայի եյական թերություններից են նաև խուլիդանության համար պատիժ վորոշելու բնադրավառում յեղած լուրջ սխալները:

Պետք է ասել, վոր «Խուլիդանության դեմ պայքարելու միջոցառումների մասին» ԿԳԿ և ԺԿԿ 1935 թ. մարտի 29-ի վորոշումը դատապարանի վոչ բոլոր աշխատողների կողմից և ձիչտ հասկացվել: Միքանի դատավորներ այդ վորոշումը բարձրացնել են մեխանիկորեն, վորպես պատիժն ընդհանուր առմամբ ծանրացնող որենք: Դատավորները համարյա դաշտաբեր են խուլիդանության համար պատիժի այլ միջոցներ կիրառելուց, բացի յերկարատև ազատազրկումից: մինչդեռ կառավարության վորոշումը նկատի ե ունեցել, վոչ թե պատիժների ընդհանուր ուժեղացումը, այլ միայն չարամիտ խուլիդանության առավել վտանգավոր տեսակների համար պատիժների ծանրացումը:

Խստագույն պատժի ծանրությունը պետք է ամենից առաջ ուղղված լինի խուլիդան-ուժցիդիվիստների, խուլիդանական խմբակների «պարագանիների» դեմ, առանձնապես չարամիտ և վտանգավոր խուլիդանական գործողությունների դեմ:

Խուլիդանության համար պատիժ վորոշելիս բավական չեղավարվել միայն ՌԽՖՍՀ Քր. Որ. 74 հոդվածի հատկանիշներով, այլև անհրաժեշտ ե լուրջ ուշադրություն դարձնել խուլիդանության բնույթի և հետեանքների վրա:

Պրակտիկայում դեռևս հանդիսավում են գեղքեր, յերբ դատարանը բոլորովին հաշվի չի առնում մեղադրյալի անձնավորությունը: Դա հանդում ե նրան, վոր չարամիտ խուլիդանների, աշխատանքային կարգավահությունը կազմաւուծողների հետ միասին: Մի քանի դատավորներ միջենույն պատժին են յենթարկում նաև աղնիվ բանվորներին, բավարարացնություն կատարարագրողներին, վորոնք առաջին անգամ են խուլիդանություն կատարարում և այդպիսին չարամիտ բնույթի չ

ունեցել։ Վորպես ծանր խուլիդանություն, պատճե խստագույն միջոցների յեն դատապարավում այնպիսի անձնավորություններ, վորոնց նկատմամբ կատարելապես հնարավոր և ընկերական դատարանների միջոցով ներդործության միջոցների կիրառում։

Տաշքենդ քաղաքի 168 մասի ժողովրդական դատարանը 1937 թ. նոյեմբերի 17-ին, Ռւզբեկական ԽՍՀ Քր. Որ. 97 հոդ. I մասով (չարամբիտ խուլիդանություն) Բ-ին-22 տարեկան, բանվոր, առաջներում չդատված—Զ-ին-22 տարեկան, բանվոր, առաջներում չդատված—և Յ-ին-25 տարեկան, առաջներում չդատված—դատապարտեց 5-ական տարվա աղատազրկման և բոլոր տեսակի իրավունքներից դրկելու՝ 2-ական տարի ժամանակով։

Ռւզբեկական ԽՍՀ Գերադույն Դատարանի վճռաբեկ կուեզիան, բոլոր տեսակի իրավունքներից զրկելու փոխարեն, դատապարտայաներին զրկեց միայն ընտրական իրավունքից, իսկ դատավճակի մասցած մասը թողեց ուժի մեջ։

Դատապարտավածները, հարբած լինելով, ջարդում են քաղ. Շ-ի պատուհանը և կոտրում դարպասը, մտնելով «Կոր» տկումբը, նրանք սկսում են հետապնդել կանանց և հայՀոյել անցենդուր բառերով։ Ակումբի գերեկցիայի պահանջներին՝ ակումբից հետահալու մասին, չեն յենթարկում։ Հարկ և լինում հրավիրել յերկու միլիցիոների։

Պարզված և, վոր դատապարտայաները խմել են իրենց ընկեր Յե-ի ԲԴԿ-ից վերադառնալու կազմակցությամբ։ Շ-ի դարպասը կոտրված և յեղել վոչ դիտավորյալ կերպով, այլ պատահմամբ, յերբ դատապարտայաներից մեկը կալչում է դարպասին։

Հիշված դործողությունների համար, յերիտասարդ բանվորների, վորոնք դատի տակ չեն յեղել, դատապարտությունը մաքսիմում պատճի, և այնելիքավագրկմամբ, պետք և սխալ համարել։ Ահա թե ինչու ԽՍՀ Միության Գերադույն դատարանի նախագահի բողոքարկման հիման վրա ԽՍՀ Միության Գերադույն դատապարտայաներից մեջ կալչում էնկանական դատապարտայաների կատարությունների մասմամբ, առաջնական դատապարտայաների կատարությունների մասմամբ, վորոնք կիրառվում են առաջին անդամական դատապարտայաների կատարությունների համար։ Վատֆաչամիք վորոշելիս պետք և հաշվի առնվելու դործողության մասնակին բարձրացներ, հանցազմի պարագաները և այլն։ Հարկավոր և խստ կերպով տարբերել այն պատճենները, վորոնք կիրառվում են չարամբիտ խուլիդանների, կրկնահանցազործների, խուլիդական խմբակների կազմակերպիչների և այլնի նկատմամբ և այն պատճենները, վորոնք կիրառվում են առաջին անդամական դատապարտայաների կատարող անձնականությունների նկատմամբ, վորոնք չարամբիտ համարել չեն կարող։

Ի մի բերելով խուլիդանության գործերի վերաբերյալ պատական պրակտիկան, անհրաժեշտ է վերջում նշել, վոր դատավճիռ կայացնելիս դատարանն ամենից առաջ պետք է համոզվի նրանում, վոր կատարված արարքը խկազես խուլիդանություն և և վոչ թե վորեւ կերպ նրան նմանվող այլ հանցազործություն։ Այսուհետեւ, կիրառելով Քր. Որ. հոդվածը, գործի հանդամները ուսումնասիրելու հիման վրա հարկավոր և վորոշել, թե խուլիդանության վերաբերյալ հոդվածի վո՞ր մասը պետք է կիրավի մեղադրյալի նկատմամբ՝ առաջինը, վոր խուլիդանության հասարակ տեսակն և նախատեսում, թե յերկրորդը, վոր խուլիդանության ծանր տեսակն և նախատեսում։ Մեղադրյալի գործողությունների մեջ խուլիդանության և վորեւ այլ հանցազործության հանցազմի առկայության գերքում, նրա գործողությունները քրեական կարգով պետք և հակազդվեն ըստ այդ հանցազործությունների համակցության։ Պատժաշամիք վորոշելիս պետք և հաշվի առնվելու դործողության բնույթը, նրա հետեանքները, ինչպես նաև մեղավորի անձնավորությունը, նրա անցյալ գործունեյությունը, հանցազործությունը, կատարելու մոտիվները և պատճառները և այլն։ Հարկավոր և խստ կերպով տարբերել այն պատճենները, վորոնք կիրառվում են չարամբիտ խուլիդանների, կրկնահանցազործների, խուլիդական խմբակների կազմակերպիչների և այլնի նկատմամբ և այն պատճենները, վորոնք կիրառվում են առաջին անդամական դատապարտայաների կատարող անձնականությունների նկատմամբ, վորոնք չարամբիտ համարել չեն կարող։

Վերջապես դատարանը քննելով խուլիդանության վերաբերյալ գործը, պետք և հիշի, վոր յերեմն խուլիդանության քողի տակ կատարվում են թշնամական գործողություններ, վորոնք վոչ այլ ինչ են, յեթե վոչ քողարկված ձեռվ հակահեղափոխական հանցազործություններ կատարող անձնականությունների նկատմամբ, վորոնք չարամբիտ համարել չեն կարող։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍՏԱԿԱՅԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԴԵՐԸ
ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԵՄ ՄՎԿԱՊ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Խուլիգանության դեմ մղվող պայքարում կարևոր դեք են խաղում ընկերական դատարանները:

Ընկերական դատարանները հանդիսանում են ամբողջ աշխատավորական կոլեկտիվի հասարակական-բարոյական ներգործության հատուկ ձեւ՝ մեր հասարակության հետամաց և անկայուն տարրերի նկատմամբ:

Ընկերական դատարանները կարեռագույն զենք են հանդիսանում հնի մնացուկներն ու նախապաշտմունքներն արժատախիլ անելու պայքարում: Ընկերական դատարանների խնդիրն է ոժանդակել կենցաղի սոցիալիստական վերակառուցմանը, մորիլիկացիայի յենթարկել հասարակական կարծիքը հին, մութ կենցաղի մնացորդների դեմ:

Կապիտալիզմի մնացուկների առկայությունը մարդկանց գիտակցության մեջ, արտահայտվում է դեռևս պրոլետարիան կոփուածություն չստացած մի քանի բանվորների կողմէց արտադրության նկատմամբ ցույց տված վոչ սոցիալիստական վերաբերմունքի մեջ: Ընկերական դատարանները պետք է ողնեն կուսակցությանը և մյուս հասարակական կազմակերպություններին վերադաստիարակելու արտադրության մեջ նոր յեկած այդ բանվորներին, վորոնք դեռևս լիիվ չափով չեն գիտակցել աշխատանքի սոցիալիստական կարգապահության ամրապնդման ամբողջ կարևորությունը:

Խուլիգանական բոլոր մանր գործերը հակահասարակական գանցանքներ են և վորպես կանոն պետք են քննվեն ընկերական դատարանների կողմից:

Ընկերական դատարանները պետք է պայքարեն մեր ձեռնարկություններում, հիմնարկություններում, բանվորական հանրակացարաններում և բարակներում դեռևս հանդիպող հայցոյանքների, ծեծի, աղմկարարության, կըռվի, կանանց նկատմամբ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու յերեւութների դեմ, վորոնք սկիզբ են առած յեղել յարական-կապիտալիստական կարգերի ժամանակ աշ-

խատավորների խավարամտությունից ու աղիտությունից և արտահայտվում են խուլիգանական զանազան դործողությունների միջոցով:

Խուլիգանության վերաբերյալ ամեն մի գործն ընկերական դատարանի քննությանը հմտորեն հանձնելը բանվորներին ակտիվ պայքարի յե մղում մեր հասարակության առանձին անդամների կուլտուրական հետամնացության դեմ, և աշխատավորների մեջ խուլիգանությունը բարոյապես դատապարտող հասարակական կարծիք ե ստեղծում:

Ընկերական դատարանները հասարակական կարծիքի և ներգործության միջոցով խուլիգաններին հասարակության նկատմամբ պարտքի զգացմունք, սոցիալիստական համակեցության կանոնների սլահպանության զգացմունք են ներարկում:

Խուլիգանության դեմ պայքարելու գործում, առանձնապես պատանիների և յերիտասարդների մեջ, խոշոր նշանակություն է ունենալու արհմիությունների, կոմսոմոլի և մյուս հասարակական կազմակերպությունների ակտիվ քաղաքական-դատադիրական աշխատանքը:

Խուլիգանության դեմ պայքարելու գործում մեծ նշանակություն ունի արհմիությունների աշխատանքը: Անհրաժեշտ է ստորին արհմիութենական մարմինների աշխատանքը այնպիս կառուցել, վորպեսպի վոչ մի խուլիգանական զանցանք չանցնի խորհրդային հասարակայնության կողքից: Արհմիությունները բանվորների և ծառայողների ուշադրությունը պետք է մորիլիկացիայի յենթարկեն խուլիգանության դեմ մղվող պայքարի վրա, այնպիսի բարոյական մթնոլորտ ստեղծեն, վորն ոժանդակի խուլիգանության լիկվիդացիային:

Կենցաղապես քայլայված ելեմենտների դեմ, խուլիգանական գանցանքներ կատարելու դեմ պայքարելու գործում մեծ դեր ունի կոմսոմոլը, վորը պետք է պայքարի հանուն յերիտասարդության բուհեկյան բարոյական դեմքի (ՕԲԼԻԿ), նրանում բարձրագույն գաղափարական և բարոյական հատկություններ դաստիարակելու համար, այնպիսի մարդիկ դաստիարակելու, վորոնց համար ոտար և անդի-


ոռակցությունը, անկարգապահությունը, թափթափածությունը, արհամարհանքը դեպի հասարակությունը:

Ժողովրդական դատարանները, խուլիզանության դեմ ամենավճռական պայքար առնելով հանդերձ, պետք է հոգածարությամբ ուսումնասիրեն խուլիզանության պատճառուները և ժամանակին ահազանգեն հասարակական կաղմակերպություններին կուլտուրական քաղաքական-դաստիարակչական աշխատանքների թերությունների մասին, ովտագործելով դրա համար մասնավորապես նաև բանվորական և այլ ժողովներում ժողջատավորի կողմից տրվող հաշվետուղեկուցմները:

ԲՈԳԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Գլուխ I. Խուլիզանության դեմ տարվաղ պայքարի խնդիրները	3
1. Սոցիալիզմի հազթանակը և սոցիալիստական կուլտուրան	3
2. Խուլիզանությունը մարդկանց գիտակցության մեջ յեղած կապետալիզմի մնացուկների արտահայտություններից մեկն	5
3. Սոցիալիստական կարգապահության դաստիարակությունը	8
4. Դատարանի անելիքները խուլիզանության դեմ մղվող պայքարում	9
Գլուխ II. Խորիրդային քրեական որենսդրությունը խուլիզանության մասին	10
1. Խուլիզանության բնորոշումը	10
2. Խուլիզանության որյեկտը	11
3. Հանցագործ գործությունը խուլիզանության կատար ման պահն	13
4. Հանցագործի հանցանքը	15
5. Հանցագործության սուրյեկտը	15
6. Հասարակ խուլիզանություն	16
7. Խուլիզանության ծանր տեսակը	18
8. Խուլիզանության տառնձին տեսակները	19
Գլուխ III. Խուլիզանության գործերի վերաբերյալ դատարան արակտիվանության	20
1. Խուլիզանության և մյուս հանցագործությունների սահմանադրումը	20
2. Հասարակ և ծանր տեսակի խուլիզանությունների սահմանադրումը	25
3. Հանցագործի տնօնավորության և հանդամանքների ուսումնառությունը՝ պատիժը վարչելիս	27
Գլուխ IV. Խորիրդային հասարակային դերը խուլիզանության դեմ մղվող պայքարում	30
	33



36.189

ԳՐԱԾ 80 Կ.

18481

Հ | Арм.
2-5733а

В. М. ЧИКВАДЗЕ

ХУЛИГАНСТВО

Издание Наркомюста Арм. ССР
Ереван • 1940